

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, կայուն և ներառական զարգացման քաղաքականության երկրորդ գործառնություն» ֆինանսավորման համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**



ՎԱՐԿ ԹԻՎ 9658-AM

ԳԿՖՀ ՏՀ ԹԻՎ TF0C4961

Ֆինանսավորման համաձայնագիր

(Կանաչ, կայուն եվ ներառական զարգացման քաղաքականության երկրորդ
գործառնություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

միջև

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ (Բանկ) միջեւ՝ Ծրագրին աջակցելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով (ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի առդիրում)՝ թվագրված Ստորագրման ամսաթվով:

ՔԱՆԻ ՈՐ՝

Ա) համոզվելով Ծրագրի իրագործելիության եւ առաջնահերթության հարցում, որի նպատակն է աջակցել Վարկառուին՝ խթանելու կանաչ, դիմակայուն եւ ներառական զարգացումը Հայաստանում՝ նպաստելով կլիմայի փոփոխությունների մեղմացմանն ու դրանց հարմարեցմանը, բարելավելով շրջակա միջավայրի կառավարումը կարգավորող դաշտը, բարձրացնելով հավասարության մակարդակը եւ խթանելով մարդկային կապիտալի զարգացումը, ինչպես նաեւ ամրապնդելով հակակոռուպցիոն համակարգի եւ արդարադատության ոլորտի արդյունավետությունը.

Բ) փախստականներից առավել ազդակիր երկրներին զարգացման աջակցություն տրամադրելու միջազգային ջանքերից հետո Բանկը ֆինանսավորում է ստացել Գլոբալ Կոնցեսիոն Ֆինանսավորման Հիմնադրամից՝ սույն Համաձայնագրի շրջանակում արտոնություններ տրամադրելու նպատակով.

Գ) համաձայն Գլոբալ Կոնցեսիոն Ֆինանսավորման Հիմնադրամի հավատարմագրային կառավարչի հետ 2016 թվականի օգոստոսի 10-ին ձեռք բերված Ֆինանսական ընթացակարգերի պայմանավորվածության պայմանների՝ Բանկը համաձայնել է սույն Համաձայնագրի պայմաններով համալիր ֆինանսավորման շրջանակում (այսուհետ՝ Ֆինանսավորում) արտոնյալ պայմաններով օժանդակություն տրամադրել Վարկառուին (այսուհետ՝ Ֆինանսավորման արտոնյալ մաս), եւ

Դ) բացի այդ, Բանկը որոշել է տրամադրել սույն ֆինանսավորումը, *inter alia*, հետեւյալի հիման վրա. i) Ծրագրի շրջանակներում Վարկառուի կողմից արդեն իսկ ձեռնարկված գործողություններ, որոնք նկարագրված են սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի I.Ա բաժնում, եւ ii) Վարկառուի կողմից պատշաճ մակրոտնտեսական քաղաքականության շրջանակ վարելու հանգամանք:

Հետեւաբար Վարկառուն եւ Բանկը սույնով համաձայնում են հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված են սույն Համաձայնագրի առդիրում) կիրառվում են սույն Համաձայնագրի նկատմամբ եւ դրա մասն են կազմում:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ապա սույն Համաձայնագրում մեծատառերով կիրառվող եզրույթներն ունեն Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի առդիրում դրանց տրված նշանակությունները:

ՀՈԴՎԱԾ II. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

2.01. Բանկը համաձայնում է Վարկառուին տրամադրել ֆինանսավորում (ֆինանսավորում), որը բաղկացած է հետեւյալից.

ա) ինսուներկու միլիոն երեք հարյուր հազար եվրոյի (92,300,000 եվրո) չափով վարկ (Վարկ), եւ այդ գումարը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով, եւ

բ) արտոնյալ պայմաններով օժանդակություն [տասնվեց միլիոն դոլարի չափով (16,000,000 ԱՄՆ դոլար) (ֆինանսավորման արտոնյալ մաս):

2.02. Միանվագ կոմիսիոն վճարը հավասար է Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25%):

2.03 Պարտավորավճարը հավասար է տարեկան Վարկի չառհանված մնացորդի մեկ քառորդ տոկոսին (0.25%):

2.04 Տոկոսադրույքը Ելակետային տոկոսադրույքն է՝ գումարած Լողացող սպրեդը կամ այնպիսի դրույքաչափ, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ համաձայն Ընդհանուր պայմանների 3.02 «ե» բաժնի:

2.05 Վարկառուն որոշում է Վարկի նկատմամբ կիրառել տոկոսադրույքի սահմանման ավտոմատ փոխարկումը: Համապատասխանաբար չսահմանափակելով Ընդհանուր պայմանների IV հոդվածի դրույթները եւ Վարկառուի կողմից Փոխարկման ուղեցույցի դրույթներին համապատասխան Բանկին այլ բան չծանուցելու դեպքում Վարկային հաշվից հաջորդական առհանումների նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի բազայի փոփոխումը, որոնց հանրագումարը հավասար է 9,230,000 եվրոյի կամ գերազանցում է այն, այդ գումարի մարման ամբողջ ժամկետի ընթացքում Ընդհանուր պայմանների IV հոդվածի եւ Փոխարկման ուղեցույցի դրույթներին համապատասխան, Ելակետային տոկոսադրույքի եւ Լողացող սպրեդի հիման վրա՝ սկզբնական Լողացող տոկոսադրույքից փոխարկվում է Լողացող տոկոսադրույքի՝ հիմնվելով Ֆիքսված ելակետային տոկոսադրույքի եւ Լողացող սպրեդի վրա:

2.06 Վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը եւ դեկտեմբերի 1-ը:

2.07 Վարկի մայր գումարը մարվում է սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի համաձայն:

2.08 Չսահմանափակելով Ընդհանուր պայմանների 5.05 բաժնի դրույթները՝ Վարկառուն անհապաղ Բանկին է տրամադրում սույն II հոդվածի դրույթներին վերաբերող այն տեղեկությունները, որոնք Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐԸ

3.01. Վարկառուն հայտարարում է Ծրագրի եւ դրա իրականացման մասով իր պարտավորությունը: Այս նպատակով, ինչպես նաեւ Ընդհանուր պայմանների

5.05 բաժնի նպատակներով՝

ա) Վարկառուն եւ Բանկը ժամանակ առ ժամանակ կողմերից որեւէ մեկի խնդրանքով կարծիքներ են փոխանակում Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի եւ Ծրագրի, ինչպես նաեւ սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի I բաժնում նշված գործողությունների իրականացման գործընթացում արձանագրված առաջընթացի վերաբերյալ.

բ) մինչեւ կարծիքների փոխանակման այդպիսի յուրաքանչյուր դեպք՝ Վարկառուն Բանկի վերանայմանը եւ մեկնաբանությանն է ներկայացնում Ծրագրի իրականացման գործընթացում արձանագրված առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն այնքան մանրամասն, որքան ողջամտորեն պահանջում է Բանկը, եւ

չսահմանափակելով սույն բաժնի «ա» եւ «բ» պարբերությունները՝ Վարկառուն անհապաղ տեղեկացնում է Բանկին ցանկացած իրավիճակի մասին, որի հետեւանքով էապես հակառակ ձեւով կփոփոխվեն Ծրագրի կամ Ծրագրի շրջանակներում ձեռնարկված ցանկացած գործողության, այդ թվում՝ սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի I բաժնում նշված ցանկացած գործողության նպատակները:

ՀՈԴՎԱԾ IV. ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.01 Կասեցման լրացուցիչ դեպք է մասնավորապես հետեւյալը. ստեղծվել է իրավիճակ, որն անհավանական է դարձնում Ծրագրի կամ դրա զգալի մասի իրականացումը:

4.02 Արագացման լրացուցիչ դեպք է մասնավորապես հետեւյալը. տեղի է ունեցել եւ Բանկի կողմից Վարկառուին դեպքի մասին ծանուցումից հետո վաթսուն (60) օր շարունակվում է սույն Համաձայնագրի 4.01 բաժնում նշված

դեպքը:

ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.01 Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայման է մասնավորապես հետեւյալը. Բանկին գոհացնում է Վարկառուի կողմից Ծրագրի իրականացման հարցում ձեռք բերված առաջընթացը եւ Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի համապատասխանությունը:

5.02 Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը Ստորագրման ամսաթվից հետո հարյուրքսաներորդ (120-րդ) օրն է:

ՀՈԴՎԱԾ VI. ՆԵՐՎԱՅԱՑՈՒՑԻՉԸ, ՀԱՍՑԵՆԵՐԸ

6.01 Վարկառուի ներկայացուցիչը նրա ֆինանսների նախարարն է:

6.02 Ընդհանուր պայմանների 10.01 բաժնի նպատակներով՝

ա) Վարկառուի հասցեն է՝

Ֆինանսների նախարարություն

Մելիք-Ադամյան փողոց 1

Երեւան 0010

Հայաստանի Հանրապետություն, եւ

բ) Վարկառուի էլեկտրոնային հասցեն է՝

Ֆաքսիմիլ՝

+374-11-800132

6.03 Ընդհանուր պայմանների 10.01 բաժնի նպատակներով՝

ա) Բանկի հասցեն է՝

Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկ

Էյչ փողոց 1818, Հս. Արմ.

Վաշինգտոն, Կ.Շ., 20433

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, եւ

բ) Բանկի էլեկտրոնային հասցեն է՝

Տելեքս՝ Ֆաքսիմիլ՝

248423 (MCI) կամ 1-202-477-6391

64145 (MCI)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է Ստորագրման ամսաթվի դրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ում կողմից՝

Լիազոր ներկայացուցիչ

Անուն՝ Վահե Հովհաննիսյան

Պաշտոն՝ ՀՀ ֆինանսների նախարար

Ամսաթիվ՝ 2024 թվականի մայիսի 23

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿ

Ում կողմից՝

Լիազոր ներկայացուցիչ

Անուն՝ Կարոլին Գեգինատ

Պաշտոն՝ ՀԲ Հայաստանի գրասենյակի ղեկավար

Ամսաթիվ՝ 2024 թվականի մայիսի 22

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ծրագրի գործողությունները, Ֆինանսավորման միջոցների առկայությունը

Բաժին I. Ծրագրի շրջանակում իրականացվող գործողությունները

Ծրագրի շրջանակում իրականացվող գործողությունները. Վարկառուի կողմից ծրագրի շրջանակում իրականացվող գործողությունները ներառում են՝

1. Շենքերում եւ ենթակառուցվածքներում կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունությունը եւ էներգաարդյունավետությունն ուժեղացնելու նպատակով Վարկառուն իր Քաղաքաշինության կոմիտեի միջոցով 2022 թվականի դեկտեմբերի 22-ի 31-Ն հրամանով հաստատել է շինարարական նոր նորմեր՝ շենքերի էներգաարդյունավետության ապահովման եւ էներգաարդյունավետության գնահատման ցուցանիշներ սահմանելու համար:

2. Օդի աղտոտվածության դիտանցման նոր համակարգի իրականացման համար Վարկառուն իր գործադիր իշխանության միջոցով՝ i) 2024 թվականի հունվարի 4-ին ընդունել է Կառավարության թիվ 23-Ն որոշումը, որով կարգավորվում է մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի արտանետումների պետական հաշվառման եւ հաշվառման վերաբերյալ տեղեկատվության գրանցման, ամփոփման, վերլուծման եւ արխիվացման կարգը, եւ ii) 2024 թվականի հունվարի 4-ին ընդունել է Կառավարության թիվ 32-Ն որոշումը, որով հաստատվում է մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման եւ սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց եւ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը

կորցրած ճանաչելու մասին կարգը:

3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նոր համակարգի իրականացման համար Վարկառուն իր գործադիր իշխանության միջոցով՝ i) ընդունել է Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2343 որոշումը՝ հանրության իրազեկման եւ հանրային լսումների ընթացակարգի հստակությունն ու թափանցիկությունը բարելավելու նպատակով, եւ ii) ընդունել է Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 2294 որոշումը՝ ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) մասին, որով կարգավորվում է ՌԷԳ կարգը եւ սահմանվում են ՌԷԳ շրջանակը եւ ՌԷԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջները:

4. 2023 թվականի սեպտեմբերի դեպքերի արդյունքում տեղահանված անձանց նոր խոցելի խմբի կարիքների աջակցության նպատակով Վարկառուն՝ i) իր գործադիր իշխանության միջոցով ընդունել է Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1864 որոշումը՝ մեկ տարի ժամկետով ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ տալով այդ խմբին, եւ ii) իր ԿԳՄՄՆ-ի միջոցով ընդունել է 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1756 որոշումը՝ մարդկային կապիտալի զարգացմանն ու զբաղվածությանն աջակցելու նպատակով տրամադրելով աջակցության տեղահանված ուսուցիչներին, այդ թվում՝ կին ուսուցիչներին՝ աշխատելու Հայաստանում:

5. Կարողությունների վրա հիմնված նոր կրթական ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով Վարկառուն ԿԳՄՄՆ-ի միջոցով ընդունել է Նախարարի 2024 թվականի հունվարի 16-ի թիվ 50-Ա/2 հրամանը՝ վերանայելով ուսումնառության արդյունքներին հետեւելու եւ դրանք օգտագործելու վերաբերյալ Սովորողների գնահատման [համապարփակ] ազգային շրջանակը՝ կրթական համակարգի դիտանցման եւ բարելավման նպատակով:

6. Բժշկական ծառայությունների որակը բարելավելու եւ պահպանելու

նպատակով Վարկառուն՝ i) 2023 թվականի մայիսի 24-ին հաստատել է «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքում կատարվող փոփոխությունը՝ անժամկետ լիցենզավորումից հինգ տարի ժամկետով լիցենզավորման անցնելու մասին, եւ ii) ԱՆ-ի միջոցով ընդունել է Նախարարի 2023 թվականի ապրիլի 25-ի թիվ 2068 հրամանը՝ թարմացնելով գործող պայմանագրային մեխանիզմը, այդ թվում՝ կատարողականի վրա հիմնված լրացուցիչ վարձատրության կարգը, որով խթանվում է առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) հասանելիության բարելավումը (կանխարգելիչ եւ մինչեւ հոսպիտալացումն իրականացրած այցերի ապահովում), եւ բարձրացվում են ԱԱՊ բժիշկների վարձատրման ցուցանիշները:

7. Քաղաքականության մշակման որակը բարելավելու նպատակով Վարկառուն իր գործադիր իշխանության միջոցով Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 2053-Լ որոշմամբ հաստատել է կարգավորման ազդեցության գնահատման (ԿԱԳ) մեթոդական ուղեցույցը՝ գնահատելու ԿԱԳ-ով կարգավորվող հինգ ոլորտների (տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի եւ մրցակցության, սոցիալական, առողջապահական, շրջակա միջավայրի եւ հանրային ֆինանսների ոլորտները) վրա կիրառելի կարգավորման ազդեցությունը:

8. Հակակոռուպցիոն ռազմավարությունն իրականացնելու նպատակով Վարկառուն՝ ա) իր գործադիր մարմնի միջոցով ընդունել է Կառավարության 2023 թվականի հունիսի 7-ի թիվ 1135-Ն եւ 1148-Ն որոշումները՝ «Ազդարարման համակարգի մասին» օրենքը գործողության մեջ դնելու համար, եւ բ) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) միջոցով ընդունել է 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 01-Ն որոշումը՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված նվերների հաշվառման ռեեստրի ստեղծումը հաստատելու մասին, որը հրապարակային կլինի, եւ նվերների հաշվառման ռեեստրի վարման կարգը հաստատելու մասին:

Բաժին II. Ֆինանսավորման միջոցների առկայությունը

Ա. Ընդհանուր դրույթներ. Վարկառուն կարող է առհանել Ֆինանսավորման միջոցները՝ սույն բաժնի դրույթների եւ այնպիսի լրացուցիչ ցուցումների համաձայն, որոնք Բանկը կարող է սահմանել՝ ծանուցելով Վարկառուին այդ մասին:

Բ. Ֆինանսավորման գումարների հատկացումը. Ֆինանսավորումը հատկացվում է մեկ առհանման տրանշով, որից Վարկառուն կարող է Ֆինանսավորման միջոցների առհանում կատարել: Այդ նպատակով Ֆինանսավորման գումարների հատկացումը ներկայացված է ստորեւ բերված աղյուսակում.

Հատկացումները	Վարկի գումարը (արտահայտված եվրոյով)	Հատկացված Ֆինանսավորման արտոնյալ մասի գումարը (արտահայտված դոլարով)
(1) Մեկ առհանման տրանշ	92,300,000	16,000,000
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ	92,300,000	16,000,000

Գ. Առհանման տրանշի բացթողման պայմանները

Մեկ առհանման տրանշից որեւէ առհանում չի կատարվում, եթե՝ ա) յուրաքանչյուր առհանում չի կատարվում *pari passu* հիմունքով եւ հատկացված Վարկի գումարի եւ հատկացված Ֆինանսավորման արտոնյալ մասի գումարի միջեւ ութսունվեց տոկոսից (86%) տասնչորս տոկոս (14%) հարաբերակցությամբ, բ) Բանկին չի բավարարում՝ i) Վարկառուի կողմից իրականացվող Ծրագիրը, եւ ii) Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի համապատասխանությունը:

Դ. Ֆինանսավորման գումարների մուտքագրումը

Վարկառուն Ֆինանսավորումը Ֆինանսավորման հաշվից առհանելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում Բանկին հայտնում է՝ ա) Ընդհանուր պայմանների 2.03 «ա» բաժնում նշված հաշվին ստացված հստակ գումարը, բ) այն հաշվի տվյալները, որին մուտքագրվելու է Ֆինանսավորման միջոցների դրամային համարժեքը, գ) գրանցում այն մասին, որ համարժեք գումար է հաշվառվել Վարկառուի բյուջեի կառավարման համակարգերում, եւ դ) Ընդհանուր պայմանների 2.03 «ա» բաժնում նշված հաշվի մուտքերի եւ ծախսերի մասին հաշվետվությունը:

Ե. Փակման ամսաթիվը. Փակման ամսաթիվը 2025 թվականի մարտի 31-ն է:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Պարտավորությանն առնչվող աստիճանական մարման ժամանակացույց

Ստորել բերված աղյուսակում ներկայացվում են Վարկի մայր գումարի մարման ամսաթվերը եւ դրանցից յուրաքանչյուրի ժամանակ վճարման ենթակա՝ Վարկի ընդհանուր մայր գումարի մասնաբաժինը՝ արտահայտված տոկոսներով (այսուհետ՝ Վճարման մասնաբաժին):

Մայր գումարի հավասարաչափ մարումներ

Մայր գումարի վճարման ամսաթիվը	Վճարման մասնաբաժինը
Յուրաքանչյուր հունիսի 1-ին եւ դեկտեմբերի 1-ին Սկսած 2032թ. հունիսի 1-ից Մինչեւ 2045թ. հունիսի 1-ը	3.57 %
Ամսաթիվը՝ 2045թ. դեկտեմբերի 1	3.61%

ԱՌԴԻՐ

Բաժին I. Սահմանումներ

1. «Հակակոռուպցիոն ռազմավարություն» նշանակում է Վարկառուի 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ ընդունված 2023 թվականի հոկտեմբերի 26-ին:

2. «Քաղաքաշինության կոմիտե» նշանակում է Վարկառուի՝ 2018 թվականի մարտի 23-ի թիվ ՀՕ-260-Ն օրենքի համաձայն ստեղծված կոմիտեն:

3. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» նշանակում է Վարկառուի՝ 2019 թվականի նոյեմբերի 20-ի թիվ ՀՕ-96-Ն օրենքի համաձայն ստեղծված հանձնաժողովը:

4. «Դրամ» նշանակում է Վարկառուի օրինական արժույթը:

5. «Ընդհանուր պայմաններ» նշանակում է «Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) կողմից ֆինանսավորման, զարգացման քաղաքականության ֆինանսավորման ընդհանուր պայմանները» (լրամշակված 2023 թվականի հուլիսի 15-ին)՝ սույն առդիրի II բաժնում շարադրված փոփոխություններով:

6. «Գլոբալ Կոնցեսիոն Ֆինանսավորման Հիմնադրամ» եւ «ԳԿՖՀ» յուրաքանչյուրը նշանակում է ֆինանսավորման մեխանիզմ՝ ստեղծված մեծ թվով փախստականների առկայությունից առավել ազդակիր միջին եկամուտ ունեցող երկրներին արտոնյալ պայմաններով ֆինանսավորման տրամադրման շեշտադրությամբ, եւ որի մասին նշված է սույն Համաձայնագրի Նախաբանում՝ որպես Ծրագրի համար Ֆինանսավորման արտոնյալ մաս տրամադրած հիմնադրամ:

7. «Կառավարություն» նշանակում է Վարկառուի վարչապետը,

փոխվարչապետերը եւ նախարարները:

8. «Ազդարարման համակարգի մասին օրենք» նշանակում է Վարկառուի «Ազդարարման համակարգի մասին» օրենքը, որն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ին եւ փոփոխվել է 2022 թվականի դեկտեմբերի 7-ին:

9. «ԿԳՄՍՆ» նշանակում է Վարկառուի Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

10. «ԱՆ» նշանակում է Առողջապահության նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

11. «Ծրագիր» նշանակում է նպատակների, քաղաքականության եւ գործողությունների ծրագիր, որոնք սահմանված կամ նշված են Վարկառուի կողմից Բանկին ուղղված՝ Ծրագրի իրականացման վերաբերյալ Վարկառուի հանձնառության մասին 2024թ. հունվարի 12-ով թվագրված գրության մեջ, եւ որով օգնություն է հայցվում Բանկից՝ Ծրագրի իրականացման ընթացքում դրան աջակցելու համար, եւ որը ներառում է ձեռնարկված գործողությունները, այդ թվում՝ սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի I բաժնում սահմանված, ինչպես նաեւ ծրագրի նպատակներին համապատասխան ձեռնարկվելիք գործողությունները:

12. «Ստորագրման ամսաթիվ» նշանակում է Վարկառուի եւ Բանկի կողմից սույն Համաձայնագիրը ստորագրելու երկու ամսաթվերից վերջինը, եւ այդ սահմանումը վերաբերում է Ընդհանուր պայմաններում «Վարկային համաձայնագրի ամսաթիվ» արտահայտությանն արված բոլոր հղումներին:

13. «Մեկ առհանման տրանշ» նշանակում է սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի II բաժնի «Բ» մասում ներկայացված աղյուսակում «Մեկ առհանման տրանշ» վերնագրով կատեգորիային հատկացված Ֆինանսավորման գումարը:

Բաժին II. Փոփոխություններ Ընդհանուր պայմաններում

Սույնով Ընդհանուր պայմանները փոփոխվում են հետեւյալ կերպ.

1. **«Բովանդակություն»** բաժնում բաժիններին, բաժինների անվանումներին եւ բաժինների թվերին արված հղումները փոփոխվում են այնպես, որ արտացոլեն ներքոհիշյալ պարբերություններում շարադրված փոփոխությունները:

2. Ընդհանուր պայմանների ամբողջ տեքստում (ներառյալ՝ առդիրը) օգտագործվելու դեպքում *«Վարկային համաձայնագիր»* եւ *«վարկային համաձայնագիր»* եզրույթները փոխարինվում են համապատասխանաբար *«Ֆինանսավորման համաձայնագիր»* եւ *«Ֆինանսավորման համաձայնագիր»* եզրույթներով, *«Վարկի կողմեր»* եւ *«Վարկի կողմ»* եզրույթները փոխարինվում են համապատասխանաբար *«Ֆինանսավորման կողմեր»* եւ *«Ֆինանսավորման կողմ»* եզրույթներով, *«Վարկի սկզբնական արժույթ»* եզրույթը փոխարինվում է *«Ֆինանսավորման սկզբնական արժույթ»* եզրույթով, եւ *«Վարկի փոխարինող արժույթ»* եզրույթը փոխարինվում է *«Ֆինանսավորման փոխարինող արժույթ»* եզրույթով: Բացի այդ, 2.01-2.04, 2.06, 3.08 «ա», «բ» եւ «դ», 5.03-5.06, 7.01-7.03 «ա»-«դ», 7.04 «ա», 7.05, 9.03 «բ» բաժիններում, այդ թվում՝ դրանց վերնագրերում օգտագործվելու դեպքում *«Վարկ»* եզրույթը փոխարինվում է *«Ֆինանսավորում»* եզրույթով, *«Վարկային հաշիվ»* եզրույթը փոխարինվում է *«Ֆինանսավորման հաշիվ»* եզրույթով, *«Վարկի արժույթ»* եզրույթը փոխարինվում է *«Ֆինանսավորման արժույթ»* եզրույթով, եւ *«Վարկի չառհանված մնացորդ»* եզրույթը փոխարինվում է *«Ֆինանսավորման չառհանված մնացորդ»* եզրույթով:

3. Առդիրի **«Սահմանումներ»** բաժնում ավելացվում են հետեւյալ նոր պարբերությունները՝ «Ֆինանսավորման արտոնյալ մաս», «Ֆինանսավորում», «Ֆինանսավորման հաշիվ», «Ֆինանսավորման արժույթ» եզրույթների հետեւյալ սահմանումներով, եւ մնացած պարբերությունները վերահամարակալվում են համապատասխանաբար.

4. ««Ֆինանսավորման արտոնյալ մաս» նշանակում է Ֆինանսավորման

համաձայնագրով չփոխհատուցվող հիմունքներով Վարկառուին տրամադրված ֆինանսավորման մասը»:

5. ««Ֆինանսավորում» նշանակում է Ֆինանսավորման համաձայնագրով նախատեսված ֆինանսավորումը»:

6. ««Ֆինանսավորման հաշիվ» նշանակում է միասին Վարկային հաշիվը եւ Վարկառուի անունով Բանկի կողմից իր մատյաններում բացված հաշիվը, որին մուտքագրվում է Ֆինանսավորման արտոնյալ մասի գումարը»:

7. ««Ֆինանսավորման արժույթ» նշանակում է այն Արժույթը կամ Արժույթները, որոնցով տրամադրվում է Վարկի եւ Ֆինանսավորման արտոնյալ մասի գերակշիռ մասը»:

8. ««Ֆինանսավորման չառհանված մնացորդ» նշանակում է Ֆինանսավորման՝ տվյալ պահին Ֆինանսավորման հաշվից չառհանված գումարը»:

9. Առդիրի **«Սահմանումներ»** բաժնում «Վարկառու», «Փակման ամսաթիվ», «Ֆինանսավորման համաձայնագիր», «Ֆինանսավորման սկզբնական արժույթ», «Ծրագիր» եւ «Ֆինանսավորման փոխարինող արժույթ» եզրույթների հետեւյալ սահմանումներում օգտագործվելու դեպքում «Վարկ» եւ «Վարկային հաշիվ» եզրույթները փոխարինվում են համապատասխանաբար «Ֆինանսավորում» եւ «Ֆինանսավորման հաշիվ» եզրույթներով: